# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՎ ՈՒ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1944 թվի նոյեմբերի 4-ի Հրամանագրով ժողովրդական տնտեսության և կուլտուրական շինարարության համար մասնագետներ պատրաստելու գործում մատուցած աչքի ընկնող ծառայությունների համար պարգևատրվել է բարձրագույն դպրոցի աշխատողների մի մեծ խումբ:

Հայկական ՍՍՌ-ից պարգևատրըվել են՝

Լենինի շքանշանով

1. Ալեքսանդր Արկադիի Հակոբյանը, քիմիական գիտությունների դոկտոր, Երևանի Կարլ Մարքսի անվան Պոլիտեխնիկ ինստիտուտի պրոֆեսոր:

Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով

1. Հրաչյա Խաչատուրի Բունիաթյանը, ակադեմիկոս, Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական Համալսարանի ռեկտոր:

Կարմիր Աստղի շքանշանով

1. Միսակ Ալեքսանդրի Պետրոսյանը, Երևանի Կարլ Մարքսի անվան Պոլիտեխնիկ ինստիտուտի դիրեկտոր:

«Պատվո նշան» շքանշանով

1. Հարություն Գևորգի Անժուրը, Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական Համալսարանի պրոֆեսոր:

2. Բարդուղիմեոս Արտեմի Ֆանարջյանը, բժշկական գիտությունների դոկտոր, Երևանի Բժշկական ինստիտուտի պրոֆեսոր:

3. Գուրգեն Անդրեի Շաքարյանը, դոցենտ, Երևանի Անասնաբուժական ինստիտուտի դիրեկտոր:

(ՏԱՍՍ)